

ԵԳԻԳԵՆԻԱՆ ՏԱԼԻՐԻՍՈՒՄ
ԹԱՏԵՐԳՈՒԹԻՒՆ ՀԻՆԴ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ

ԳՈՐԾՈՂ ԱՆ ԶԻՆՔ

Իմիգենիա
 Թոաս-Տառւրիսի արքան
 Օրես
 Պիլադ
 Արքան

Գործողութեան տեղն է Դիանայի սրբազան պուրակը:

—
 ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ.

Առաջին ՏԵՍԱՐՅԱԿ

Իֆիգենիա. (մենակ). Անցած օրերի ծեր սաղազարթախոտ

Սուրբ անտառակի դող գող կատարներ,

Սարսոռուն սրտով մտնում եմ նորից

Չեր շուաքի տակ, որպէս դիցուհու

Լուռ սրբութեան մէջ.

Կարծես առաջին անգամն եմ մտնում

Ու հոգիս այդպէս չի ընտելանում:

Երկար տարիներ ապրում եմ թագնուած

Մի վերին ուժից, որ տիրում է ինձ.

Բայց ինչպէս առաջ, միշտ օտար եմ աստ:

Զատուած եմ աւաղ սիրելիներից,

Եւ ափին կանգնած շատ ու շատ օրեր

Փնտրում եմ հոգով միշտ ցամաքն յունաց,

Ու հառաջներիս՝ ալիքը շարժուն

Խուլ շառաջներով է լոկ ձայնակցում:

Կայ, ով որ հեռու ծնող, սիրելուց

Մենակ ամայի կեանք է քաշ տալիս:

Հրճուանքը նորա վիշտ է ու թախիծ.

Միշտ նորա հոգին դառնում է դեպի
 Օճախն հայրական, ուր որ արեգակն
 Առաջին անգամ նայել է ժամով,
 Ուր խաղակիցներն երգ ու խաղերի
 Ամուր կապերով կապւում են սեբտիւ.
 Չունիմ վիճելիք աստուածների հետ,
 Բայց կնոջ վիճակն արժան է ողբի.
 Տան ու կռուի մէջ այր մարդն է իշխող,
 Ու օտար երկրում չի կորչի երրեք.
 Նրանն է աւար ու փառքի պսակ
 Եւ կամ ընկնելիս-մահ հերոսական:
 Սակայն կնոջ բախտն անձուկ է սաստիկ.
 Դաժան ամուսնուն հլու հպատակ—
 Դա պարտքն է նրա ու միսիթարանք:
 Որքան խեղճ է նա, երբ իւր իսկ տնից
 Հեռու է վանում չար բախտը նրան:
 Թոռան էլ ահա—մի ազնիւ արքայ,
 Բռնել է պահել ինձ լուրջ, ստրկի
 Կապերով ամուր: Եւ ես ի՞նչպիսի
 Ամօթ, ոսկումով քեզ խոստովանիմ:
 Որ լուռ խորշումով ծառայում եմ քեզ,
 Քեզ, Աստուածուհի, որ փրկեցիր ինձ:
 Կեանքս կամաւոր ձօն պէտք է լիներ
 Քեզ, ով գիցուհի: Միշտ տխուր ժամիս
 Քեզ եմ յուսոցել և յուսում եմ զեռ,
 Քեզ ով Դիանա, զ՞ւ, որ ինձ առար
 Քո սուրբ ու մեղմիկ բազուկներիդ մէջ
 ի՞նձ, մեծ արքայի մերժուած զատեր:
 Մեծը Դիանա, թէ դու մեծ մարդուն
 Ահով պատեցիր, աղջիկն ուզելով,
 Թէ դու դիցազարմ Ազամենսին,
 Որ իւր սիրելուն քեզի զոհ բերաւ,
 Մեծ Տրովադայի յաղթուած պատերից
 Փառքով ճոխացած տուն ես ուղեկցել,
 Թանգ ելեկտրային ու սիրուն որդուն՝

Իր անգին գանձերն իրան ես տուել՝ աղաս ոչը Ա
Դու, դուստր Զեսիր ինձ էլ տուն ճամբիր ճշանան
իմինների մօտ ու ինձ ազատիր ճշանանան
Այստեղ ապրելուց, երկրորդ մահուանից,
Դու, որ միանդամ մահից փրկեցիր:

ԵՐԿՐՈՐԴ ՑԵՍԱՌԱՆ

Թթիզենիա եւ Արքան

Արքաս. Արքայի կողմից սղջոյն քրմուհի:
Մեր քաղաքն ամրողջ ձօն պիտի բերէ
իւր մեծ դիցուհուն, նրա պարզեած
Նոր զարմանալի յաղթութեան համար:
Յայտնում եմ դա քեզ արքայի կողմից:
Որ ահա զօրքով զալիս է այս կողմ:
Իֆիզենիա. Պատրաստ ենք նրան վայելուչ ընդունել.
Եւ մեր դիցուհին թուաս արքայի
Զոհը կամաւոր սիրով կընդունի:

Արքաս. Ո՞չ, առաքինի, զգաստ քրմուհի,
Ինչու քո սլայծառ հայեացքդ բոլոր
Մեզ չի պարզեում ներքին աշխարհիդ
Խաղաղ հոգեկան անյօյզ դրութիւն:
Ի՞նչ վիշտ դադանալի կրծում է հոգիդ:
Իզուր ցանկացանք երկար տարիներ
Քեզնից սրտաբուղիս, մտերիմ մի խօսք.
Այն օրից, երբ քեզ այս վայրում տեսայ,
Միշտ այդ սարսուալի հայեացքն է դէմքիդ:
Եւ հոգիդ կարծես երկաթ կտպերով
Կտպուած է կրծքիդ խորին ծալքերում:

Իֆիզենիա. Այդպէս է արժան ոլր ու մերժուածին:
Արքաս. Միթէ դու այստեղ որբ ես ու մերժուած
Իֆիզենիա. Օտար աշխարհն ինձ տուն չէ հայրական.
Արքաս. Բայց օտար է քեզ հայրենիքդ արդէն:
Իֆիզենիա. Այդ է որ ահա կընծում է հոգիս:

Մատաղ հասակում երբ հոգին հազիւ
 Հօր, մօր, եղրօր հետ կապւում է սիրով,
 Նոր ծիլ ընձիւղներն եռանդուն, սիրով,
 Տենչում են գնալ, գուրս գալ արմատից;
 Աւաղի ինձ բռնեց մի օտար անէծք,
 Բաժնեց, խորտակեց զօրաւոր բազկով
 Քնքոյշ ու սիրուն կապերն հարազատ,
 Անցան մանկութեան ժամերն հրճուանքի
 Մատաղ օրերի լուռ երջանկութիւն:
 Ստուեր եմ միայն սեփական կեանքիս.
 Թէև աղատուած, բայց ժպտուն կեանքի
 Հաճոյքը աշխոյժ էլ չի ծաղկում ինձ:

Աղքաս. Թէ որ քեզ այդքան անբախտ ես հաշւում,

Աղա թոյլ տուր քեզ ապերախտ կոչեմ:

Իֆիզենիա. Բայց ես ապերախտ չեմ եղել բնաւ:

Աղքաս. Բայց չե՞ս էլ եղել դու երախտագետ

Որի համար մարդ բարիք է անում:

Ուր է այն ուրախ ծիծաղը դէմքիդ,

Գոհ և բաւական կեանք սիրալիր:

Երբ ճակատագիրդ ահեղ գաղտնալի

Տարիներ առաջ քեզ տաճար բերաւ,

Լոկ պատկառանքով ու համակրանքով

Ծնդունեց քեզ աստ մեծ արքան թուաս.

Եւ օտարակուլ ամին այս սոսկալի

Ժպտերես դէմքով սղջունեց քեզի:

Բեղանից առաջ, լստ հին բարքերի

Ամեն մի օտար մեծ Դիանայի

Սեղանի առաջ դոհ էր արիւնոտ:

Իֆիզենիա. Լոկ աղատ շունչ չէ տուածը կեանքի:

Միթէ կեանք է սա, որ սուրբ վայրերում

Ես քաշ եմ տալիս տրտում ու տիսուր,

Որպէս սին ստուեր սեփական շիրմիս:

Միթէ զիտակից կեանք է սա ուրախ—

Պարապ օրերի շալք երազալի:

Անպէտք կեանքն անշուշտ մահ է վաղահաս.

Ամենից դժբախտն ես եմ կանանց մէջ:
 Արքաս. Որքան էլ խղճամ, բայց ներում եմ քեզ,
 ներում եմ քո այդ վեհ հպարտութեան,
 Որ խլում է քեզնից հաճոյքը կեանքի:
 Քո գալուց յետոյ մի՞թէ բան չարիր,
 Ո՞վ պարզեց պղտոր միտքը արքայի.
 Երկար տարիներ հեղիկ խօսքերով
 Ո՞վ ոչնչացրեց բիրտ բարքերն անգութ,
 Ո՞վ վերջացրեց օրէնքն արիւնոտ,
 Ու գերեալներին անփախուստ մահից
 Փրկեց, ազատեց, հայրենիք զրկեց:
 Զէ՞ որ զիցուհին բարեհաճ էր քո
 Հեղիկ աղօթքին—փոխանակ սաստի,
 Որ հին արիւնոտ զոհին վերջ տուիր:
 Զէ՞ որ զօրքն ահա փառքի մէջ կորած
 Յաղթանակներով դէպ տուն է դառնում:
 Եւ մի՞թէ արքան, որ երկար օրեր
 Մեր քաջ, իմաստուն տէրն է ու իշխան,
 Զի ուրախանում քո ներկայութեամբ,
 Լուռ ու անշշուկ հպատակութեան
 Մեր ծանր պարտքեր մեղմով քնքշաբար
 Զի՞ թեթևացրել:
 Մի՞թէ այս բոլորն անպէտք ես կարծում,
 Երբ շատ շատերին քո ներկայութեամբ
 Բերում ես առատ կեանքի բալասան:
 Դու, որ երկնքից այդ տանջուած աղզին
 Աղբիւր ես յաւետ կեանքի բերկրանքի,
 Եւ անհիւրընկալ, մահուան ափերում
 Օտարին փրկում ու տուն ես զրկում:
 Իֆիզենիա. Քիչը հեշտութեամբ կորցնում է աչքից,
 Ով գեռ գործելու շատ բան է տեսնում:
 Արքաս. Դովում ես արդեօք դու այն գործողին,
 Ով զին չի զնում իւր արժանիքին:
 Իֆիզենիա. Արժէ պարսաւել իւր արած գործով հպար-
 տացողին:

Արքաս. Ինչպէս և նրան,

Ով իւր արժանիք չի գնահատում.

Անշուշտ և նորան, ով կեղծ արժանիքն

Մնապարձութեամբ շատ բարձր է պահում:

Հաւատաց դու ինձ և լսիր խօսքիս,

Ի՞նձ, որ միշտ անկեղծ, շիտակ եմ դեպ քեզ.

Երբ այսօր արքան քեզ հետ կը խօսի,

Ասել տուր զիւրաւ, ինչ քեզ պիտ ասի:

Ի՞նձ վախ ես ազգում քո բարի խօսքով

Ես թագաւորի առաջարկներից

Խուսափել եմ միշտ:

Արքաս. Խորհիր քո արածդ ու քեզ պիտանին.

Մեծ արքան որդուն կորցնելուց ի վեր

Հատ քչերին է հաւատ ընծայում

Եւ այդ քչերին ոչ առաջուայ պէս:

Տեսնում է ցաւով իւր գահն անժառանգ:

Երկիւղ է կրում իւր անօդնական

Ծերութեան համար, զուշակում է նա

Նոյն իսկ յանդուզն ապստամբութիւն

Եւ մահ վաղահաս: Բիրտ սկիւթացին

Խօսքի մէջ չունի կիրթ ու ընտիր ձև.

Իսկ Թոռաս արքան—աւելի պակաս.

Նա, որ հրամաններ սովոր է տալու

Եւ միշտ դորձելու, անկասկած չունի

Խօսակցութեան մէջ իւր մտքի խորհուրդն

Առաջ տանելու նրբամտութիւն:

Մի դժուարացնէ դանդաղ յագաղմամբ

Ոչ էլ մերժումով, զնա՛ բարեհաճ

Ալքայի զիմաց:

Ի՞նձ որ սեփական անձիս կը սպառնայ:

Արքաս. Միթէ արքայի հետամըտութիւնն

Դու սպառնալիք կուզես անուանել:

Ի՞նձ որ սեփական անձիս կը սպառնայ:

Արքաս. Ուշ գարձրու դու լոկ նրա հակումին:

Ի՞ֆիզենիա. Միայն երբ հոգիս փրկէ երկիւղից.
 Աղքաս. Ինչու նրանից ծածկում ես ծագումդ.
 Ի՞ֆիզենիա. Լաւ է քրմուհին գաղտնալի մնայ:
 Աղքաս. Պէտք չէ արքայից թագցնել և ոչինչ.
 Եւ թէպէտ արքան այդ չի պահանջում
 Բայց սրտանց արդեն շատ խորը կերպով
 Զգում է, որ զու գաղտնիք ես պահում:
 Ի՞ֆիզենիա. Միթէ մեծ արքան դժգոհ է ինձնից:
 Աղքաս. Այդպէս է թւում: Թէև քո մասին
 Լուռ է շարունակ, թւում է սակայն
 Նրա խօսքերից, որ տենչում է նա
 իւր ամբողջ հոգով քո տէրը լինել.
 Օ լսիր դու ինձ, թոյլ մի տար երբէք
 Նրա կրծքի տակ զայրոյթն աճելու,
 Մի բերէ զլխիդ սարսափ պատուհաս,
 Լսիր իմ խօսքիս, չզզջաս յետոյ:
 Ի՞ֆիզենիա. Վայել է միթէ մեր թագաւորին՝
 Այն ազնիւ մարդուն այդպէս մտածել.
 Նա որ խոր սիրով լի է գէպ երկինք,
 Որ բարձր է պահում անունն ու պատիւ:
 Միթէ նա կուզէ ինձ բռնի ուժով
 Սեղանից քաշ տալ, տանել իւր մահիճ:
 Կը կանչեմ բոլոր երկնայիններին,
 Իմ քաջ զիցուհուն օգնական սատար,
 Եւ կոյս զիցուհին չի մերժէ անշուշտ
 Յոյս ու ապաւէնն իւր կոյս քրմուհուն:
 Աղքաս. Հանդիսա կաց, արքան չի վարուի երբէք
 Երիտասարդի բորբոք արիւնով
 Եւ նա չի դորձէ յանգուզն դորձեր:
 Երկիւղ եմ կրում ես ուրիշ բանից.
 Նա էլ չի փոխի կամքն ու որոշմունք,
 Զի նրա հոգին հաստատ է: անշարժ:
 Խնդրում եմ ուստի, վստահացիր նրան:
 Եղիր շնորհակալ, եթէ որ միայն
 Էլ ուրիշ ոչինչ չես կարող նրան տալ:

Իֆիզենիա. Օ՛, ասա էլ ի՞նչ նոր բաներ զիտես
Աղքաս. Նա թող քեզ առէ. տեսնում եմ, ահա
Գալիս է արքան, յարգում ես նրան,
Յայտնի է դա ինձ. Եւ քո սիրտդ ազնիւ
Ուրախ ու վստահ կընդունէ նրան:
Իֆիզենիա (մենակ). Ինքս էլ չզիտեմ; թէ ինչպէս վարուեմ
Սակայն կը լսեմ իմ պարտքիս ձայնին,
Բարի խօսք կասեմ մեր թագաւորին,
Փոխարէն նրա բարեգործութեան:
Եւ երանի՛ թէ կարողանայի
Միայն ճշմարիտն ասել արքային:

ԵՐՐՈՐԴ ՏԵՍԱՐԱՆ

Իմիզենիա եւ Թոաս.

Իֆիզենիա. Թող արքայական լի բարիքներով
Առատ դիցուհին օրհնէ քեզ, արքայ.
Փառք և յաղթութիւն թող նա պարզեէ
Քեզ ու քո մարդկանց; Թող կատար ածէ
Քո խոնարհ համեստ մտքերըդ բոլոր,
Որ գուշ շատերին հօր պէս իշխելով,
Ինքըդ շատերից բարիք ճաշակես;
Թոաս. Գոհ կը լինէի, երբ իմ ժողովուրդն
Ինձ գովարանէր; Եմ ունեցածից
Ինձանից աւել այլք են ճաշակումն
Երջանիկ է նա, լինի նա արքայ,
Կամ յետին ծառայ, ով բախտ է դտնում
Սեփական տան մէջ; Մասնակից էիր
Դու խոր վշտերիս, երբ թշնամու սուրն
Ինձանից լալեց վերջին, սիրասուն
Թանկադին որդուս, ու ինձ անժառանդ
Վշտահար թողեց:
Քանի դեռ հոգիս վրիժով էր ապրում,
Տան մէջ ես կարծես մենակ չէի դեռ,

Սակայն այժմ արդէն, երբ փառքով լցուած
 թշնամու աշխարհն քար ու քանդ արած
 Սիրելի որդուս վրէմը հանած
 Փառքի թևերով ես տուն եմ զառնում;
 Չունիմ տանս մէջ ոչինչ հաճելի:
 Նախկին ժպտերես հպատակութիւն,
 Որ տեսնում էի բոլորի աչքում;
 Վշտով ու հոգսով է արդ սքողուած:
 Խորհում են ամենքն օրհասի մասին,
 Լուռ հնագանդուում իրանց անժառանգ
 Խեղճ թագաւորին—պարտքն է զա նոցա:
 Մտնում եմ նորից այս տաճարը սուրբ,
 Ուր ես շատ անդամ մտել եմ առաջ
 Պարձանք խնդրելու, փառք որոնելու:
 Մի հին ցանկութիւն պահում եմ կրծքիս,
 Որ օտար չէ քեզ, ոչ էլ յեղակարծ:
 Իմ ժողովրդիս ու իմ անձնական
 Բարիքն ուզելով ես յոյս եմ տածում
 Քեզ իմ տուն տանել, որպէս նորահարս:
 Իջիղենիա. Աղորմած արքայ, դու անձանօթիս
 Խիստ շատ բարիքներ ես առաջարկում:
 Ամօթով պատած, ես, վտարանդիս
 Այս օտար ափում էլ բան չեմ փնտրում
 Հովանաւորից ու հանգստից զատ, որ տալիս ես ինձ:
 Թուաս. Լաւ չէ, որ ինձնից, զերթ յետին մարդուց
 Դու անձիդ ծագում զաղտնի ես պահում:
 Սարսափ էր մեր ափն եկորի համար,
 Այդ էր պահանջել օրէնքն անհրաժեշտ:
 Բայց դու, որ ազատ վայելում ես բարիք,
 Ինչպէս սիրալիր մի հիւր պատուական,
 Քեղանից անշուշտ ես զերթ հիւրլնկալ
 Սրտաբացութիւն ու վստահութիւն
 Անկեղծ յուսալու իրաւունք ունեմ:
 Իջիղենիա. Մեծափառ արքայ, ոչ թէ քեզ տածած
 Անվստահութիւնն, այլ որտիս յուզմաւնքն

Եր պատճառ, որ ես ծածկել եմ անունն
 իմ ծնողների ու իմ սեփական
 Հայրենի ցեղի:
 Զի աւազ, եթէ գու գիտենայիր,
 Թէ ինչ անիծեալ մարդու ես պահում
 Ու սնունդ տալիս, սրտիդ կըտիրէր
 Քեզ արտասովոր զզուանք ու սարսափ,
 Ու գահըդ ինձ հետ բաժնելու փոխան
 Կարտաքսէիր ինձ քո պետութիւնից.
 Բախտի որոշմամբ իմինների մօտ
 Դառնալուց առաջ, այդ կերպ վարուելով
 Ինձ կըմատնէիր խոր թշուառութեան,
 Պազ, օտարօտի ահ ու սարսափի,
 Որ բաժին է միշտ տուն տեղից զրկուած
 Խեղճ թշուառական թափառականին:
 Թուաս. Ուր էլ որ լինես և անմահների
 Ինչ որոշմանն էլ ենթարկուած լինեաց
 Բայց քանի այստեղ հիւր ես մեր երկրում,
 Երկնից օրհնութիւնն ինձ չի պակասում:
 Խիստ դժուարութեամբ կը համոզուէի,
 Որ ես յանձին քո, պաշտպան եմ կանգնում
 Մեղսալից մէկին:
 Իֆիզենիա. Օրհնութիւնն անշուշտ
 Գործիցդ է բարի և ոչ քո հիւրից:
 Թուաս. Զարին օգնելով մենք չենք օրհնում:
 Վերջ դիր լոռութեանդ ու մերժմանդ յամառ:
 Քեզ հետ խօսակցողն անարդար մարդ չէ:
 Դիցուհու կողմից դու ինձ յանձնուեցիր.
 Ինձ էլ զու սուրբ ես, ինչպէս զիցուհուն.
 Նրա տկնարկն ինձ թող օրէնք լինի.
 Թէ քեզ դէպի տուն յոյս կայ դառնալու,
 Բոլոր կապերից կազատեմ ես քեզ:
 Բայց եթէ այդ քեզ փակուած է ընդ միշտ,
 Թէ ցեղըդ բոլոր մի մեծ չարիքի
 Կուլ է զնացել կամ ոչնչացել,

Իմն ես ապա դու, բոլոր օրէնքով:
 Խօսիր պարզօրէն, դու գիտես արդէն
 Որ որոշմունքով փոփոխամիտ չեմ:
Իֆիզենիա. Մարդկային լեզուն գիւրաւ չի խզում
 Երկար պահպանած լռութեան գաղտնիք:
 Սրտի խորքերից երբ գա դուրս եկաւ,
 Երբ որ նա թողեց կայեանն ապահով,
 Նա էլ չի դառնայ նախէին օթեանն.
 Ու անմահների ցանկութեան նայած
 Կամ վեասող կըլինի և կամ օդտարեր:
 Լոիր. Տանտալի սերունդիցն եմ ես:
 Թոսս. Հանգիստ ես ասում դու մի մեծ անուն:
 Նա է քո նախնին, որին ողջ աշխարհ առաջ
 Ճանաչում էր զերթ շնորհըով լցուած եադ զի
 Երկնայինների: Դա Տանտալն է այն
 Որ իւպիտերից ճաշի կոչուեցաւ,
 Նաև խորհրդի, որի հանճարեղ մասնաւոր չմի
 Բազմափորձ խօսքերն որպէս մի պատգամ
 Զարմացնում էին երկնայիններին:
Իֆիզենիա. Նա է: Անմահներն սակայն չպիտի
 Մարդոց հետ վարուին հաւասարի պէս:
 Վեհ բարձրունքներում բարձր սաւառնել
 Մահկանացուի գործը չէ երբէք:
 Տանտալ դաւող չէր, ոչ էլ անազնիւ,
 Շատ բարձր էր սակայն շանթառաք Զեսին
 Բստրուկ լինելուց, իսկ ընկեր լինել
 Նրա բանը չէր: Նա ամեն բանով
 Մարդ էր կատարեալ: Նրա դառաստանն
 Խիստ եղաւ սաստիկ: Եւ բանտառեղծներն
 Երգում են, թէ նա իւր գոռողութեան,
 Անկարգ անկանոն կեանքի պատճառով
 Գահավիժուեցաւ Զեսի սեղանից
 Մութ Տարտարոսի անդունդների մէջ,
 Եւ աւազ, նրա խեղճ ցեղը բոլոր
 Իւր վրայ է կըում ամօթ-նախատինք:

Ռոռաս. Ի՞ւր թէ նախահօր մեղքի պատճառով:
 Իֆիզենիա. Նրա թոռներին թէև տիտանեան
 Զօրաւոր ուղեղն ու կարող հողին
 Ի' ոկ ժառանգութիւն ու բաժին ընկաւ,
 Բայց նրա ճակտին աստուածն աշարկու
 Պողպատէ կնիք դրոշմեց ընդ միշտ,
 Ու նոցա մթին վախկոտ հայեացքից
 Ծածկեց հեռացրեց չափաւորութիւն
 Եւ խոհեմութիւն, և խելօք խրատ
 Եւ համբերութիւն։ Մոլի կիրք դարձան
 Նոցա մէջ բոլոր տենչերը անմեղ,
 Ելնելով չափից սանձարձակ, ազատ;
 Տենչասէր Պելոպսն, Տանտալի զօրեղ
 Որդին սիրեցեալ, դաւ-սպանումով
 Իրան կին առաւ մեծ կնոմասի
 Ամենասիրուն Հիպոդամ դոտեր,
 Որ երկու զաւակ պարգևեց նրան—
 Թիէստ և Ատրէս։ Նոքա նախանձով
 Իրանց հօր տածած տենչանքի վրայ
 Նայում էին լուռ գեպ մի այլ որդի
 Ուրիշ անկողնից դուրս եկած աճած։
 Ատելութիւնը կապում է նոցա
 Ու կատարում են գաղտնի մողերի
 Սկիզբն առաջին—եղբայրասպանութիւն։
 Հայրը կառկածու կնոջն է հաշւում
 Որդու սպանիչ, և մոլեգնաբար
 Ցետ է պահանջում իւր մեռած որդուն։
 Եւ Հիպոդամ կինն զրկում է իրան
 Իւր դժբախտ կեանքից...

Թոռաս. Ինչու լոեցիր.

Խօսքը առաջ տար։ Մի զղջար, որ դու
 Խօսում ես վստահ, սրտաբաց, ազատ։
 Իֆիզենիա. Երանի նրան, ով սիրայօժար
 Խօսք է բաց անում իւր նախնիքների
 Մեծութեան, փառքի դործերի մասին

Ու լսողներին անցեալը պատմում։
 Ապա իւր ցեղի վերին ծայրերում կամ ամենքին
 իրան տեսնելով, լոռւմ է ուրախ։
 Զի ոչ մի տնից չեն զուրս դայ մեկէն
 Ոչ կիսաստուածներ, ոչ էլ հրէշներ։
 Այլ նախ աշխարհին այցի են գալիս
 Չարի կամ բարու շարքերն առաջին
 Բերելով սարսափ կամ ուրախութիւն։—

Հօր մահից յետոյ երկու եղբայրներն՝
 Ատրէսն ու Թիկստ տէր դարձան քաղքին։
 Սակայն չէր կարող երկարել նոցա
 Միարանութիւն։

Ու շուտով Թիկստ պղծեց հարազատ

Անկողինն եղբօր, վրիժառու Ատրէսն

Արտաքսեց նրան իւր պետութիւնից։

Բայց վաղուց Թիկստ նախատեսելով

Խլել էր ծածուկ իւր եղբօր որդուն

Ու մեծացնում էր եղբօրից գաղտնի։

Սնելով նրան ոխ ու վրիժով,

Քաղաք է զրկում գնայ—սպանէ

Յանձին հօրեղբօր, իւր հօրն իսկական։

Պատանու մոքերն լոյս աշխարհ եկան։

Արքան սպանեց մանուկ եկորին,

Կարծելով թէ դա որդին է եղբօր։

Եատ ուշ իմացաւ, թէ հարրած աչքով

Ում է սպանել։ Եւ իւր խոր որտի

Վրէժի տենչին նա յագուրդ տալու

Անլուր գործերի ծրագիր է կազմում։

Լուռ ու անտարբեր ու հաշտուած սրտով

Կանչում է եղբօրն երկու որդոցով.

Ծածուկ մորթելով խեղճ զաւակներին,

Սարսուալի ափսէն հօրն է ուտացնում։

Եւ երբ որ Թիկստ իւր որդոց մսից

Յագուրդ է առնում։ որդոց տեսնելու

Բռնւում է տենչով։ կանչում է նրանց

Հարցնում նրանց մասին...
 Եւ երբ յոյս ուներ դաշլիճի դռնից
 Լսել նոցա ձայնն ու տեսնել նրանց,
 Մորթոտուած որդոց ձեռներն ու ոտներն
 Ատրէսն հրճուանքով խեղճ հօրն է նետում:
 Ծածկում ես դողով դէմքըգ, որ արքայ,
 Արևն էլ ծածկեց իւր դէմքը պայծառ,
 Կառքը շուռ տուաւ ուզուց մշտական:
 Դոքա են նախնիք քո խեղճ քրմուհու.
 Եւ մռայլ զիշերն մթին թեերով
 Շատ դժբախտ մարդկանց յանցաւոր դործեր
 Ծածուկ է պահում ու թաղում է մեզ
 Լի սոսկումներով ազօտ լոյսի մէջ:
 Թռաս. Դէհ դու էլ լոիր: Բաւ է քեզ ասել
 Այլքան սարսափներ: Ի՞նչ զաղտնի հրաշքով
 Առաջ եկար դու այդ վայրի ցեղից:
 Իջիզենիա. Իմ հայրն Ատրէսի որդին էր աւագ՝
 Մեծն Ազամեմնոն. և թոյլ տուր ասել,
 Որ ես սկզբից տեսել եմ նրան
 Որպէս մի տիպար կատարեալ մարդու:
 Նրա ամուսինն էր կլիտեմնեստրան,
 Ես նրա աւագն, ապա էլեկտրան.
 Իշխում էր արքան հանդարտ, ապահով,
 Եւ ծանտալի տունն հանգիստ էր վայելում
 Վաղուց չտեսած: Բայց ծնողների
 Երջանիկ կեանքին պակասում էր դեռ
 Մի արու զաւակ, ահա այդ տենչի
 Արդիւնք է լինում մեր եղբայրն Օրեսա,
 Տանը սիրելին, որ քոյրերի հետ
 Ազատ մեծնալով, մեր ընտանիքին
 Նոր դժբախտութեան վիհ է բաց անում:
 Աշեղ մարտի կոչն հասած կը նի ձեզ
 Որ չքնաղ կնոջ վրէմի համար
 Յոյն իշխանների ամբողջ զօրութիւն
 Քաշեց Տրովայի պատերի ներքոյ:

թէ առան արդեօք նոքա Տրովան, առաջըահ
 Գործն աւարտեցին—շղիտեմ ևս այդ: պահ ան
 Յունաց բանակին հայրս էր զօրապետ. այս յան
 Ալիսում նոքա զուր սպասեցին Սահմանական առաջական
 Յաջողակ քամու, զի մեծ Դիանան մաժդան
 Առաջնորդի վրայ ոաստիկ զայրացած ճամփան
 Բոնել էր պահել շտապողներին, ինչու յէ մայլ
 Եւ կալխաս քրմի բերանով ուզել առաջ դպրու
 Արքայի աւագ գտեր՝ որպէս զոհ: առաջ ազգութ
 ինձ հրապուրեցին մօրս հետ բանակ,
 Քաշեքաշ տարսն սեղանի առաջ առաջնորդական առաջ
 Ու նուեր տուին շասկոտ զիցուհուն Ճամփան
 Իմ թշուառ զլուխս: Եւ նա հաշտուեցաւ այս
 Անմեղ արիւնի կարօտ չեմ բնաւ,
 Ամպի ծալքերով ազատեց նա ինձ, առաջ մայրութ
 Ու այս տաճարում առաջին անդամ առաջնորդական առաջ
 Ես ուշի եկայ: Այս, Ես եմ, Ես այս մայրութիւն
 Ես իջիդենիան, թոռնիկն Ատրէսի,
 Ու Ագամեմնոն դուստրը արքայի:
 Թոսա. Աղջիկն արքային պատռով ու բարձով ամրութ
 Չունի ինձ համար սչինչ խտրութիւն— նա առաջ
 Ինձի անծանօթ անձի նկատմամբ:
 Կրկնում եմ նորից ես իմ առաջարկ.
 Հետեւիր զու ինձ և ինչ որ ունեմ
 Մասնակից եղիր:
 Իջիգենիա. Այդ քայլն անելու չունիմ քաջութիւն-
 Զէ որ իմ կեանքի իշխանն իսկական
 Բարի գթառատ Դիցուհին է արդ:
 Նա ինձ պատրաստեց խաղաղ ապաստան,
 Եւ զուցէ այստեղ պահում է նա ինձ
 Հրճուանք բերելու արքայ ծնողիս
 Ծերացած օրին, որը բաւական
 Պատժուեցաւ ինձնով: Եւ զուցէ արդէն ամոց յի
 Ուրախ վերադարձն հեռու չէ ինձնից: ամոց միան
 Միթէ զիցուհու մտքին չանսալով առաջ ըցան

Ես ընդ միշտ այստեղ կապուած պիտ մնամ;
 Մնալու համար նշան եմ խնդրել:
 Թոսս. Նշան չէ միթէ, որ զեռ չես գնացել:
 Էլ մի որոնիր մերժող ելակետ.
 Մերժելու համար զու շատ մի խօսիր,
 Խօսքերիդ միջին ոչն է միշտ փայլում:
 Իֆիզենիա. Դրանք լոկ դատարկ խօսքեր չեն բնաւ.
 Ես քեզ բաց արի իմ սիրտը խօրունկ.
 Ա՛խ, զու չես զգում ինչպէս եմ տենչում
 Տեսնել հօրս ու մօրս, քրոջս ու եղբօրս.
 Հին դահլիճներում ուր տիսրութեան ամպն
 Ա՛յդքան տարիներ անունս է յիշել,
 Ինչպէս կըկախուեն զոյն զոյն պսակներ,
 Եւ զերթ նորածին, ինչպէս կընդունուեմ:
 Ա՛խ, երանի թէ ինձ տուն ճամբէիր,
 Դու մեզ բոլորիս նօր կեանք կըտայիր:
 Թոսս. Ուրեմն յետ դարձիր. ցանկացածդ արա.
 Բարի խրատի, բանականութեան
 Չայնին մի լսի: Կին եղիք լիիւ.
 Անձնատուր եղիր ձայնիդ մզումին,
 Որ անսանձօրէն քեզ ընդգրկելով
 Դող զող է հանում անհասատ կերպով:
 Երբ ձեր կրծքերում վառւում է մի տենչ:
 Ոչ մի սուրբ կապանք այլ ես չի օգնում,
 Հօր կամ ամուսնու զթոտ հոգատար
 Հանում է զրկից, իսկ երբ նոյն տենչանքն
 Լոռում է կրծքում, իզուր են այլ ես.
 Համոզման ոսկի խօսքերը բոլոր:
 Իֆիզենիա. Յիշիր, ով արքայ, տուած խօսք ազնիւ.
 Այս է փոխարէն սրտաբացութեանս.
 Դու պատրաստ էիր ամեն բան լսել:
 Թոսս. Անյօյս բաների պատրաստ չէի ես,
 Բայց պիտ՝ լինեի, միթէ յայտնի չէր
 Որ կին մարդու հետ ես դործ ունեի:
 Իֆիզենիա. Մի վատարանիր մեր խեղճ ցեղն արքայ*

կնոջ դէնքն այո՛, փառաւոր չե՛, բայց
Անազնիւ էլ չէ: Հաւատա՛ արքայ,
Քո անձիդ բարիքն լաւ եմ հասկանում
Նոյն իսկ քեզանից: Զճանաչելով
Ոչ քեզ, ոչ էլ ինձ, կարծում ես, արքայ,
Մեղ բաժան կըքերէ այդ ամուսնութիւն:
Արիասիրտ կերպով ու բարի կամքով
Ստիպում ես ինձ, որ համաձայնուեմ:
Փառք աստուածներին, որ չեն ցանկանում
Մեր այդ միացումն, տալով ինձ զօրեղ
Դիմազրութեան յամառ ամրութիւն:

Թոսաս. Ոչ թէ Աստուածներն, այլ քո սեփական
Սիրտգ է այդ ասում:

Իֆիզենիա. Աստուածներն արդէն

Մարդկանց սրտերի միջով են խօսում:
Թոսաս. Եւ ինքս էլ միթէ նոցա լսելու չունիմ իրաւունք:
Իֆիզենիա. Զայները նոցա

Կորչում են մրրկի խուլ մոնջման մէջ:
Թոսաս. Միթէ քրմուհին է միայն լսում:

Իֆիզենիա. Մեզնից էլ առաջ արքան է լսում:

Թոսաս. Սրբազան պաշտօնդ ու մեծ եօվիսի

Ճաշի սեղանին հաղորդ լինելու

Քո ժառանգական սուրբ իրաւունքներդ
երկնայնոց գահին աւելի մօտիկ

Քեզ են տեղ տալիս, քան թէ մի վայրի
երկնածին մարդու, թէկուղ նա լինի

Արքայ մեծազօր:

Իֆիզենիա. Այդ էլ քո խնդրած

Սրտաբացութեանս տուգանքն է դուցէ:

Թոսաս. Ես մարդ եմ; գիտցիր: Բայց վերջ տանք դրան:

Ահա քեզ տուած իմ խօսքը վերջին,

Մնա՛ քրմուհի մեծ Դիանային,

Ինչպէս որ նա քեզ ընտրել է արդէն:

Եւ ինձ կըներէ զիցուհին անշուշտ

Որ այսքան օրեր անարդարութեամբ

Ու միշտ զղջալով զրկել եմ նրան
Հին հին զոհերից: Մեր երկրի ափերն
Օտարի համար մահ էին համակ.
Միայն դու էիր, քո ուրախ դէմքով
Որ ինձ մերթ որպէս դուստր էիր կարծես,
Մերթ սրտիս խորքում փափկառուն հարսի
Սէր էիր ծնեցնում: Դու էիր, այո,
Որ ինձ կապելով սիրոյ շղթայով
Պարտքըս սեփական մոռանալ տուիր:
Միտքս շրջեցիր ուղուց բնական:
Տրտունջը ցեղիս ես չեի լսում,
Որ ակնյայտնի ինձ էր վերագրում
Որդուս ողբալի մահը տարաժամ:
Չէ, էլ չեմ կարող քո սիրոյ համար
Դէմ կալ ամբոխին, որ սաստիկ յուղուած
Զոհ է պահանջում:

Իֆիզենիա. Իմ արգելքն, արքայ
Անձիս համար չէր: Լաւ չի ճանաչում
Նա աստուածներին, ով արիւնը ուուշտ
Է նոցա կարծում: և իւր սեփական
Ահռելի տենչերն նրանց վերագրում:
Ինձ չէր, որ կորզեց քրմի դանակից
Մեծ աստուածուհին: Զի նրա համար
Լաւ էր աւելի իմ ծառայութիւնս
Քան վախճանս անպարտ:

Թոսս. Վայելուչ բան չէ մեր մտքով դատել
Հին և սրբազան բարքերն անցեալի.
Պարտքըդ կատարիր, իմս էլ ես կանեմ:
Երկու օտարներն, որ մեր ափերում
Թագնուած են այրում: և ոչինչ բարիք
Չեն բերում երկրիս, իմ ձեռն են արդէն:
Թող այդ մարդկանցով առնէ դիցուհին
Իւր իրաւացի նուերն առաջին,
Որից իզուր տեղ զրկուած էր վաղուց:
Շուտով ես նոցա տաճար կուղարկեմ:

Իսկ դու կատարիր պահաջաջը պարագիգւ
Իֆիզենիա (մենակ). Դու, իմ ազատիչ, մեծը Դիանա,
Դու ինձ պատեցիր ամպի շերտերով
Ու խեղճ մերժուածիս հողմի թերով
Քո բարի կարծած վայրը բերեցիր:
Իմաստուն եռ դու, ապագան տեսնող:
Միաժամանակ անցեալին գիտակ:
Քո մարդկանց վրայ հայեացքդ պայծառ
Հանգչում է, որպէս մութ զեշերների
Կեանքը լուսատու, սահում է անցնում սպա՞ն
Երկրի վրայով Փրկի՛ր զիցուհի,
Անմեղ բազուկներս արիւնոտ գոհից,
Որ չ տալիս մեզ հանգիստ օրհնութեան:
Ու պատահական անմեղ մօրթուածի
Հայեացքը պղտոր երկար կը նեղէ
Ու սարսափի կազդէ ակամայ թշուառ
Խեղճ սպանողին:
Զի շատ տարածուած ցեղը մարդկային
Անվախճանների սէրն է վայելում:
Ու նոցա կամքով աւելի երկար
Կեանքով է ապրում: Թողնում են նոքա
Մահացու մարդկանց միառժամանակ
Երկնային չքնաղ գեղավ հիանալ,
Իրանց պատկանող յաւիտենական
Ժպտերես երկնի տեսքով կշտանաւ:

Power